ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/34973-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-208-24.06.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-208-24.06.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով են հարկվում Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման նպատակով ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բարերարների կողմից բացառապես ռազմական նշանակության շրջանակներում ռազմական տեխնիկայի, զենքերի վրա տեղադրելու համար նախատեսված հեռադիտակային նշանոցների, տեսահսկման և այլ ռազմական նշանակության ապրանքների՝

1) ներմուծման կամ մատակարարման համար թռիչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար անհրաժեշտ վառելանյութի մատակարարումը և աերոնավիգացիոն, թռիչք-վայրէջքի ծառայությունների մատուցումը.

2) ներմուծման կամ մատակարարման հետ ուղղակիորեն կապված՝ բեռնման, բեռնաթափման աշխատանքների կատարումը:

Օրենքի նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ առաջարկությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ նշված ապրանքների ներմուծման կամ մատակարարման համար թռիչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար անհրաժեշտ վառելանյութի մատակարարման և աերոնավիգացիոն, թռիչք-վայրէջքի ծառայությունների մատուցման, ինչպես նաև այդ ապրանքների ներմուծման կամ մատակարարման հետ ուղղակիորեն կապված՝ բեռնման, բեռնաթափման աշխատանքների կատարման դեպքերում ԱԱՀ-ի մասով արտոնություններ նախատեսված չեն: Այս առումով, հաշվի առնելով ռազմական նշանակության ապրանքների ներմուծման և մատակարարման կարևորությունը, անհրաժեշտություն է առաջանում նշված հարցը կարգավորել օրենքի ուժով:

Շարադրվածի կապակցությամբ հայտնում ենք, որ, թեև օրենքի նախագծի և դրա ընդունման հիմնավորման մեջ առկա են որոշակի անորոշություններ, այդուհանդերձ, ենթադրվում է, որ հարցը վերաբերում է կազմակերպությունների կողմից օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների մասով ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափ

կիրառելուն: Այս առումով՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք) արդեն իսկ նախատեսված են համապատասխան կարգավորումներ՝ բեռների միջազգային փոխադրումների մասով ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափ կիրառելու համար: Մասնավորապես, օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 4-րդ կետի համաձայն՝ բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման՝ միջազգային տրանսպորտային ծառայությունների մատուցումը հարկվում է ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով: Նույն կետի կիրառման իմաստով՝

ա. բեռների, փոստի և (կամ) ուղևորների՝ ցանկացած տեսակի տրանս-պորտա-յին միջոցով փոխադրման տրանսպորտային ծառայությունը համարվում է միջազգա-յին, եթե այն սկսվում է Հայաստանի Հանրապետությունում և ավարտվում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կամ եթե այն սկսվում է Հայաստանի Հանրա-պետության տարածքից դուրս և ավարտվում Հայաստանի Հանրապետության տարածքում,

բ. տրանսպորտային ծառայություն է համարվում նաև այլ կազմակերպու-թյունների և (կամ) ֆիզիկական անձանց միջոցով (ներգրավմամբ) բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման կազմակերպման միջնորդական գործունեությունը.

2) 8-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով է հարկվում նաև միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի՝

ա. լցավորման համար անհրաժեշտ վառելանյութի ու ամբողջ երթուղու ընթաց-քում օդանավերում անձնակազմի և ուղևորների կողմից սպառման համար նախա-տեսվող ապրանքների մատակարարումը,

բ. սպասարկման (ներառյալ աերոնավիգացիոն, թռիչք-վայրէջքի), նորոգման, վերասարքավորման, միջազգային երթուղիներով փոխադրվող ուղևորների, ուղեբեռ-ների, բեռների և փոստի սպասարկման աշխատանքների կատարումը և (կամ) ծառա-յությունների մատուցումը, փոխադրման ընթացքում ուղևորներին ծառայությունների մատուցումը.

3) 9-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով է հարկվում այն միջ-նորդական ծառայությունների մատուցումը, որոնք անմիջականորեն կապված են և ապահովում են նույն մասի 8-րդ կետում նշված ծառայությունների մատուցումը:

Միաժամանակ՝ օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից կատարվում են մի քանի տեսակի աշխատանքներ և (կամ) մատուցվում են մի քանի տեսակի ծառայություններ, և մի տեսակի աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը մյուս տեսակի աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նկատմամբ կրում է օժանդակ բնույթ, ապա օժանդակ աշխատանքների կատարման կամ օժանդակ ծառայությունների մատուցման վայր է ճանաչվում հիմնական աշխատանքների կատարման կամ հիմնական ծառայությունների մատուցման վայրը:

Հաշվի առնելով շարադրվածը՝ հայտնում ենք, որ բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման՝ միջազգային տրանսպորտային ծառայությունների մատուցումը, միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար անհրաժեշտ վառելանյութի մատակարարման ու սպասարկման (ներառյալ աերոնավիգացիոն, թռիչք-վայրէջքի), նորոգման, վերասարքավորման, միջազգային երթուղիներով փոխադրվող բեռների սպասարկման աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումն օրենսգրքի համաձայն արդեն իսկ հարկվում են ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով:

Ելնելով շարադրվածից՝ հայտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման հիմնավորմամբ նկարագրված խնդիրներն արդեն իսկ լուծված են օրենսգրքով սահմանված կարգավորումների շրջանակներում, և, հետևաբար, օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2019 թվականի N 943 - Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Խ-208-24.06.2019-ՏՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ

Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Խ-208-24.06.2019-ՏՀ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 30

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-208-24.06.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 65-րդ Հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում՝

1. Լրացնել նոր «գ.» ենթակետ.

«« գ. Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման նպատակով, ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ բարերարների կողմից՝ բացառապես ռազմական նշանակության շրջանակներում՝ ռազմական տեխնիկայի, զենքերի վրա տեղադրելու համար նախատեսված հեռադիտակային նշանոցների, տեսահսկման եւ այլ ռազմական նշանակության ապրանքների ներմուծման կամ մատակարարման համար թռիչքներ իրականացնող օդանավերի՝ լիցքավորման համար անհրաժեշտ վառելանյութի մատակարարումը եւ աէրոնավիգացիոն, թռիչք-վայրէջքի ծառայությունների մատուցումը»»

Հոդված 2. Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1. Լրացնել նոր « 14)»-րդ կետ.

«« 14) Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման նպատակով, ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ բարերարների կողմից՝ բացառապես ռազմական նշանակության շրջանակներում՝ ռազմական տեխնիկայի, զենքերի վրա տեղադրելու համար նախատեսված հեռադիտակային նշանոցների, տեսահսկման եւ այլ ռազմական նշանակության ապրանքների ներմուծման կամ մատակարարման հետ ուղղակիորեն կապված՝ բեռնման, բեռնաթափման աշխատանքների կատարումը:»

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Գործող 17.11.2017 ՀՕ-194-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ միջպետական (միջկառավարական) համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման նկատմամբ ավելացված արժեքի գծով արտոնություններ են սահմանված:

Ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ բարերարների կողմից Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար, բացառապես ռազմական նշանակության ապրանքների ներմուծման եւ մատակարարման համար թռիչքներ իրականացնող օդանավերի՝ լիցքավորման համար անհրաժեշտ վառելանյութի կամ սպասարկման՝ աէրոնավիգացիոն, թռիչք-վայրէջքի ծառայությունների, ինչպես նաեւ նշված ռազմական նշանակության ապրանքների՝ բեռնման, բեռնաթափման աշխատանքների կատարման մասով ԱԱՀ-ի արտոնություն չի տրամադրվում, այսինքն վերոնշյալ օրենքը չի կարգավորում եւ որեւէ այլ իրավական կարգավորում բացակայում է այսպիսի դեպքերում: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ինչպես նաեւ ռազմարդյունաբերության զարգացման համար ռազմական նշանակության ապրանքների ներմուծման եւ մատակարարման կարեւորությունը, ինչպես նաեւ այն փաստը, որ նման դեպքերը բացառիկ են լինելու, համատարած եւ ձեռնարկատիրական գործունեության բնույթ չեն կարող ունենալ՝ անհրաժեշտություն է առաջանում կարգավորել օրենքի ուժով: Ավելորդ չէ նշել նաեւ, որ բարերարների կողմից իրականացվող այսպիսի գործառույթներից ակնկալել պետական բյուջեի եկամուտներ՝ արդարացված, հիմնավոր չէ եւ դուրս է որեւէ տրամաբանության շրջանակներից:

Ակնկալվող արդյունքը

Հիմք ընդունելով այն իրողությունը, որ օդային փոխադրումներն ունեն ռազմավարական նշանակություն, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ինչպես նաեւ ռազմարդյունաբերության զարգացման համար ռազմական նշանակության ապրանքների ներմուծման եւ մատակարարման գործառույթների իրականացման համար, օրենքի ընդունումը՝ վարվող քաղաքականության եւ ՀՀ անվտանգության ապահովման բնագավառում կապահովի վստահության, բարի կամք դրսեւորելու ավելի բարձր մակարդակ:

Եզրակացություն

Առաջարկվող՝ Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման ազդեցությունը պետական եւ համայնքների բյուջեների եկամուտների եւ ծախսերի վրա կլինի չեզոք: